Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Կ. Կոստանյան

Երևանի Մ. Խորենացու անվան հ. 143 հիմն. դպրոցի Vա դասարանի դասղեկ Ա. Սահակյանի աշխատանքային պլան

I կիսամյակ

2022-2023 ուստարի

Դասարանի նկարագիրը --- Դասարանում սովորում է 20 աշակերտ:Բոլորն էլ աշխատասեր են,սիրով են կատարում բոլոր հանձնարարությունները: Ընկերասեր են և պարտաճանաչ:

Ուստարվա ընթացքում նախատեսվում է հատկապես մեծ ուշադրություն դարձնել անհատի ինքնուրույն մտածողության,դատողություններ և եզրակացություններ կապարելու կարողություններն ու հմտությունները զարգացնելու վրա;Նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ,գրքի քննարկումներ զրույցներ հայրենիքի, ազնվության, բարության, ներողամտության մասին:

Գեղագիտական դաստիարակություն _____ Աշակերտների գեղագիտական ճաշակը բարձրացնելու,գեղեցիկի հանդեպ սեր արթնացնելու նպատակով կկազմակերպվեն այցելություններ մշակութային օջախներ,պատկերասրահ, կդիտեն ներկայացում: Կկազմակերպվեն նաև կարդացած գրքի քննարկումներ, ասմունքի ժամեր:

Հոգևոր դաստիարակություն____ Ծանոթացնել քրիստոնեական տոներին, արժեքներին, ավանդույթներին,այցելել հոգևոր մշակութայի օջախներ:Հասկանալ հոգևոր տոների նշանակությունն ու դերը մեր ազգային նկարագրի պահպանման գործում:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով կազմակերպել զրույցներ հայրենիքի, հայրենասիրության մասին:Զրուցել Անկախության օրվա,ազատության, հայոց բանակի ձևավորման մասին:Նշել Հայոց բանակի օրը:

Բնապահպանական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ բնության նկատմամբ սեր և հոգատարություն զարգացնելու նպատակով զրուցել բնության դերի, նշանակության մասին:Սովորեցնել մաքուր պահել բնությունը ,հոգ տանել նրա մասին;Ստեղծել կանաչ անկյուն և մշակել բույսերը:Այցելել Բնության պահպանության թանգարան:

Աշխատանքային դաստիարակություն _____ Կարևորել շրջակա միջավայրի մաքրությունը,մասնակցել դպրոցում կազմակերպվող աշխատանքներին, շաբաթօրյակներին:

Ուստարվա ընթացքում դասեր կլսեմ դասարանում դասավանդող ուսուցիչների մոտ:

Ծնող- ուսուցիչ կապը ապահովելու նպատակով կկազմակերպվեն ծնողական հանդիպումներ և ժողովներ:

Կանցկացվեն դասղեկի ժամեր, որի ժամանակ կզրուցենք ազնվության, ընկերասիրության, ներողամտության,քաղաքավարության, պատասխանատվության և այլ թեմաներով:

I կիսամյակում կազմակերպվող միջոցառումներ,այցելություններ մշակութային օջախներ

1.	Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում	Սեպտեմբեր
2.	Այցելություն Խնկո Ապոր անվան գրադարան	Սեպտեմբեր
3.	Կարդացած գրքի քննարկում	Շարունակական
4.	Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառում	Հոկտեմբեր
5.	Թատերական ներկայացման դիտում	Հոկտեմբեր
6.	Իմ Երևան(շարադրության մրցույթ)	Հոկտեմբեր
7.	Այցելություն բնության պահպանության թանգարան	Նոյեմբեր
8.	Երբ գալիս է Ամանորը	Դեկտեմբեր